


15834

15835

15836

15897

1cp



Ա. Խ. Խ Ջ Ե Մ Ո Յ Վ Ի Ր

Ա Զ Ա Տ Ե Ր Գ Ա Ր Ա Ն

Կ Ա Մ

Մ Ր Մ Ո Ւ Զ Հ Պ Յ Կ Ա Կ Ա Ն

15837

Ա. Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ



1908

Տ Պ Ա Ր Ա Ն „Ի Ր Ա Խ Ո Խ Բ“ Լ Ե Ա Գ Ր Ո Յ
Վ Ո Ւ Ն Ա

ՄՐՄՈՒՆՁ ՀԱՅԿԱԿԱՆ

ՄԱՂԹԱՆՔ

Տէր՝ կեցո՛ գու զհայս
Եւ արա՛ զնոստ պայծառ
Իեցո՛ զհայս

Զողոր մո թիւնդ վերին
Հաճեա՛ ձօնել նոցին,
Զի նոյն մարթացին
Ապրիլ յաստիս :

Ոլ Տէր մեր, Տէր փութա՛,
Զանդ մեր համայն փըրկեա՛
Ի մի նամեաց

Կափո զոչո նոցուն
Հատ զար ժատոցն ըզբուն
Եւ զորդ մեր պարտաօտուն
Արա՛ հզօր.

Ի քո իջեալ տեղի
Զաթոռ հայրապետի
Մեր հաստատեա

Զերկարութիւն կենաց
Հօր մեր աստուածազգեաց,
Շնորհեա՛ պետին մեր հարց
Ար զմեղ հովուէ:

Աջովդ համատարած
Զազդ մեր արտահալած
Փոյթ գումարեա՛

ՄԱՏԵՆԱԴՅՈՒՆԵ

Բա՛ւ է, գութան, մեր տանջանքը՝ համբերութիւնն
վերջ ունի
Դուն տեսա՞ր որ մեր գուշմանը՝ ամօթ, խելք ու
գութ չունի
Արի՛ փըշրեյ ևս քու խոփը, տտնք դարբինին
կըուլու,
Կըունք-կոփենք սուր ու սուսեր, դուշմաղի զէմ
կաւելու

Եղբարք հայեր, առեք խոփը՝ տւէք դարբին
կըուլու,
Կոել-կոփել սուր ու սուսեր Հայաստանը փրկելու
Գամառ-Քարիպ



ԿՈՉ ՄՈՒՏԻ

Տղայք, ժողվը ինք հեռաւէն ու մօտէն,
Զինւոր կա չելու փողեր ձայն կը հանեն.
Սաստիկ պատերազմ ընելու պատրաստ ենք,
Զէնքերնիս առնենք ու առաջ ալ քուլենք:

Առաջ ալ քալենք ո՛հ, առաջ ալ քալենք,
Զէնքերնիս առնենք ու առաջ ալ քալենք
Սաստիկ պատերազմ ընելու պատրաստ ենք,
Զէնքերնիս առնենք ու առաջ ալ քալենք:

Ահա յեր առցեւ կայ անթիւ թշնամի,
Բայց մեզ վանելու զօրութիւն, ուժ չունի.
Զօրութիւն է մեր կամք, մեր երգն այս ընկե,

Յաշխարհ Արարատեան
Ի վայր մեր ծննդեան
Որ այժմ է սեփհական
Օտարազգաց
Առաքեա՛ ի բարձանց
Զհամակցութիւն կամաց
Ի մերազնեայս
Զոմն ի մէնջ յարո՛
Պաշտպան ազգի մերոյ
Տուր նմա ցուպ հուժկու
Հովուել բզմեզ:

Մ. Դ. Թամիադեանց



ՎԱՆԵՑԻ ԳԵՂԶՈՒԿԻ ՏԱՂԻ

Ազօթարանը բացւեցաւ, ժամանակ է զարթելու.
Էրթամ ախօս, գոմշուկներս լծեմ՝ գութան վարելու:
Դէ՛ն, գոմշուկներ, հլէ՛ք, ելէ՛ք, արտը երթանք
աշխատինք,
Հարկ ու խարճին վատէն մօտ է, վօթենք արուն
ու քրտինք:

Հայի գութան, հայի գութան, որի համար կը
ջանաս,
Ա՞վ քեզիմով կը տանջւի, որին դու կուշա հաց
կուտաս.

Այս օր երբ քեզ ձեռքս առի, ազատ օրս կորուցի.
Անզտիս սիրատ վհատեցաւ, հոգիս թուրքին մատնեցի:

Օտար սիրում է մեղ իբրեւ հուրի,
Նւ մեր հացն ու ջուր դարձնում է աղի:

ԱՌԻ, բաւ է, հայեր, ձեր անմիռնթիւն,
Պատիւ չի բերեր մեր հայ ոզգութեան,
Պէտք է շուտ գտնել միութեան դարման,
Որով աղատենք մեր մայր Հայաստան:

Պէտք է միսնալ ամբողջ Հայաստան,
Թող տեսնայ Եւրոպ ու Ամերիկան,
Պէտք է մենք լուծենք վրէժ հայկական,
Քանի այսպէս է թուրքի գատաստան:

Վան փոքրիկ քաղաք իւր գաւառներով,
Լեցւեցաւ դիտկ հարիւր հազարով,
Ներկւեցան դաշտեր հայու արիւնով,
Զայն տւին երկինք տնպերն աստղերով:

Տեսէք Սուլթանը ինչքան անամօթ,
Բաշեց մեր վրայ սուր ու թմզանօթ.
Բայց երբ շողչողաց հայկագեան սուրեր,
Խաւարը պատեց թշնամեաց սրտեր:

Ելէք ընկերներ, առնենք հրացան,
Առգութ թուրքերը նոր կատաղցան.
Մեր հայ եղբայրներ շրջապատսւեցան,
Եւ մեր տուները հրոյ ճարակ դարձոն:

Իմ վերջին համբոյր կուտամ ձւզ, հայեր,
Չըլլայ թէ մասնաք զուք իմ պատուէրներ,
Եւ Հայաստանի անմեղ մանուկներ,
Շուտով լուծեցէք հայու վրէժներ:

Ս. Ժամակոչեան

Դւ քաջութունով միշտ առաջ ալ քալենք:
Առաջ ալ քալենք, եւն:

Մինչ մահ կը հասնի մենք կւ լզենք մարտնչիլ:
Մեր քաջ զօրապետ չի կրնար յաղթւիլ:
Հայկայ փայլուն սուրը մեր ձեռքը առնենք,
Յաղթութիւն տանինք ու առաջ ալ քալենք:
Առաջ ալ քալենք, եւն:

Շատ նեղութիւնով կսացւի յաղթութիւն,
Թշնամուն երբէք չընենք մենք զթութիւն.
Սակայն գստահ ենք թէ պիտի մենք յաղթենք,
Երբ անյսղող մենք միշտ դէպ առաջ քալենք:

Առաջ ալ քալենք, ո՞հ, առաջ ալ քալենք,
Զէնքերնիս առնենք ու առաջ ալ քալենք.
Սաստիկ պատերազմ ընելու պատրաստ ենք,
Զէնքերնիս առնենք ու առաջ ալ քալենք:

(Կրօնական երգէ մը բարեփոխուած)



ԱՂԲ ՎԱԼՄՊՈՒՐԱՌԱՐԱ

ԱՌԻ, Վասպուրական տխուր Հայաստան,
Անթիւ հերոսներ քեզ մէջ ժողվեցան:
Ահեղ կռւի մէջ այնքան դիմացան,
Ի սէր ազգութեան նահ ստակւեցան:

ԱՌԻ, բաւ է, հայեր միշտ այսպէս զերի,
Թողնել հայրենիք դիմու օսարին.

ԽԱՆՈՒՄԾԻ ՍՐԾԱԽԱՆՔԻՆ ԱՌԹԻՒ

Կարկուտ տեղաց Խանասօրայ դաշտումը
Ֆէտայիներ զաշնակցական, վլէժխնդիր գոռու և են.
Սոսկաց քիւրար, լեղապ ստառ Մազրիկցին,
Զէր սպասեր իսպառ ջնջուիլ ֆէտայիի գնդակից:

Եպման, Աստուած, ֆէտային եկաւ ո՞ւր փախչինք,
Ասաց ոբուն կրծքին սեղմած լեղապստառ քրդուհին.
Մի վախեր, հանգիստ եղիր, բաջի ջան,
Կանանց երբէք ձեռք տալու չէ վրիժառու քաջ
ֆէտան:

Մի ժամւայ մէջ մազրիկ ցեղը ջնջւեցաւ,
Խանասօրայ կաւանչ զաշտեր կարմրը ներկւեցաւ.
Հայեր յիշեցէք նւիրական այս օրը.
Յուլիս ամսի քսանինդին կատարեցէք մեր տօնը:



ՆՊԱՏԱԿԻՄ ԳԵԹ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐԻԵՐ

Նպատակիս ղէթ մի մասը կատարւէր,
Եարալի բլբուլ եմ.
Հոյրենիքիս ազատութիւնը աեսնեմու մեռնեմ
Եար արի, տուե արի, շուա արի բլբուլ,
Սարկի գիւլն եմ:

Ախ իմ դարձս շատացել է չեմ կարող,
Եարալի բլբուլ եմ,
Դարդի ձեռքից ո՞ր ջուրն ընկնեմ աղատել:

Տուն արի, շուա արի, եարալի բլբուլ եմ,
Սարերի գիւլն եմ:

Ա՛խ, անբախտ հայդուկիս Տէր իմ, դու խղչաց
Եարալի բլբուլ եմ,
Մի թողնիր թուրքի գնդակով զուր կորչի
զնամ

Եար արի, տուն արի, շուա արի բլբուլ եմ
Սարերի գիւլն եմ:



ՀԱՅԴԻԱԽԻՆ ԵՐՂԵՐԻՑ

Դաշնակցական խումբ գնանք մենք Սասուն
Մեր հայ եղբայրներ մեզ են ըսպասում,
Անդրանիկը քաջ իւր ընկերներով,
Կուզէ պատերազմ, կոպ սոէ գարնան:

Մօտ է գարունը շուտով կրբ-ցիի,
Հայի խօսքը քաջ, շուտով կը լսի,
Հայերն անցախ, հոգով միացած,
Հրացան ուսերին մերն է «Նոր-տարին» . . .

Խմբապետները հոգով են կանգնած
Ֆիդայի ուժով գնույ են առաջ
Առաջն է կանգնած Անդրանիկը քաջ
Դոռում է կոչում, կուզէ պատերազմ:

Յիշէք եղբայրներ մենք շատ քննցինք,
Բաւական է մօնք այոքան համբերենք.

Մայր-Հայաստանը ճնաքից հանեցինք,
Հիմայ ոյժ ունենք դարձեալ յետ կառնենք:



ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Ի իշեր-ցերեկ աշխատում ես անգաղար,
Ի ո խեղճ ազգի քաջ պահպան Անդրանիկ,
Եաւ քդ ընծայել ես ազգիդ համար
Դեն մոռանայ քեզ յաւիտեան Անդրանիկ:

Քո անսնը օր-ըստ-ըրէ բարձրացաւ,
Լսեց ձայնը չար Սուլթանը սարուցաւ,
Զենքիդ շառաչիւնը Եւրոպան իմացաւ,
Քեզի գոչեց քսցն Վարդան -Անդրանիկ:

Քաջեր ունես գու քեզ մոռը, քաջ հսկայ,
Կոփւծի աէս միշտ կուռմ ես անխնայ,
Չո սրտի մէջ ահ ու երկիւղ հէջ չ'այ,
Յոյց կուտաս գործ գու քաջութեան-անդրանիկ:

Երկու հազար սուկով մարդիկ ճամբեցին,
Քո դէմ հազար մի թակարդ լարիցին,
Ինչ հազար քիւրտեր քեզ պաշտեցին,
Որ հանեն քեզ կախողան -Անդրանիկ:

Քրւդիստա՛ - Տաճկաստան էր որոտում,
Յարձրացուցիր դրօշակ Սամոյ լեռներում,
Եիրուս խնդրում է, ունենաս բազում,
Աղնիւ քաջեր, գու ինքնանշան Անդրանիկ:



ԵՐԳ ՄԱՀԻԱՆ

Ահա մօտեցան մահւան ժամերս,
Ալ չեմ իմանուր բոլոր ցաւերս,
Կը զատւիմ քենէ, սիրուն ծաղիկս.
Բայց դաղրում չունին իմ խեղճ աչերս:

Ինչպէս 'տի զատւիմ, սաստիկ է սէրս,
Բայց օգուտ չունի, 'Աստուած է տէրս:

Համբերէ քիչ մը, ո՛վ մահ սոսկալի,
Զե՞ս մի մեղքնար սիրտն իմ ցաւալի.
Համբերէ քիչ մը որ սէրս առնեմ,
Եւ այնուհետեւ հանգիստ քուն ընեմ:

Ինչպէս 'տի զատւիմ սաստիկ է սէրս,
Բայց օգուտ չունի, 'Աստուած է տէրս:

Բը կը մտածեմ մէկ երկու ժամէն,
Հողեր ու որդիր զիս պիտի ծածկեն.
Ամէն կողմերս ծակեն ծակծկեն.
Իմ մատղաշ մարմինս մատաղ 'տի անեն:

Ինչպէս 'տի զատուիմ, սաստիկ է սէրս,
Բայց օգուտ չունի, 'Աստուած է տէրս:

ՀԱՅՈՒ ԵՐԳԸ

Ահա՝ ծագեց կարմիր արեւ,
ծաք եւ պայծառ է օրը.
Դէ՛, քաշեցէ՛ք, սիրուն եղներ,
Յառա՛ջ տարէ՛ք արօրը:

Վարը վարենք ակոս փորենք,
Խո՛ր ակօսներ հողին մէջ,
Սերմ ցանենք, որ հունձ հնձենք,
Ցորեան դիզենք կալին մէջ:

Կըգայ ձմեռ—մենք վախ չունենք—
Ուրա՛խ կանցնի մեր օրը.
Ուտելու միշտ պաշար ունինք,
Լի եւ կուշտ է մեր փորը.

Դէ՛, քոշեցէ՛ք, սիրուն եղներ,
Ծուտով վարինք արտերը.
Թո՞ղ չասեն մեր գրացիքը՝
Մոյ են Հաւօի եղները:

ԻՄՖՖԻ

—  —

ՎԵՐՋԻՆ ՎԱՐԴ

Վերջին վարդ վերջին վարդ
Սիրականիս վերջին զարդ.
Նա քեզ հանեց իր կրծից,
Ինձ պարզեւեց վերջին վարդ.

Մանկութեանո ոսկի ժամեր
Անցել են անդառնալի.
Կորած սիրոյս յիշատակ,
Դու ես միայն, վերջին վարդ.

Քտրնան օրեր անցել են.
Տօթ ամառն է ինձ էրում.
Միշտ սպասում եմ քաւ տեսքին,
Դու ամառւայ վերջին վարդ:

Երջանիկ կեանքիս օրերը
Յաւ են դառել առաջիս.
Ուրիշ օրեր, ուրիշ կեանք,
Մտքիս բերիր, վերջին վարդ:

Ծատ չի տեւել կը բացւի
Էկոաջիս սեւ գերեզման,
Էս աշխարհից միայն քեզ
Հետո կառնիմ, վերջին վարդ:

—  —

Ե Բ Գ

Երբ ալեկոծ ծովու վրայ,
Իմ մակոյկը խորտակի ի.
Ես փրփրացէզ ալեաց մէջը
Դեռ իմ յոյսը չեմ կարի:

Բոլոր ուժովս եւ համարձակ
Բազու կներս կը շարժեմ,
Աղիքները պատառելով
Դէպի ափը կը թըռչեմ:

Անհաւսար այս կուի մէջ
Թէ ուժերս չի թողնին
Աւիքները յորձանք տալով
Դէպ անդու զը զիս տանին.

Այն ժամանակ ես սփրիանք
Ես կը դանեմ անոր մէջ,
Որ մեռնում եմ քաջի նման
Կոիւ տալով մինչեւ վերջ:

Գ. Թաղեռուեան



Կիլիկիյ

Երբոր բացուին դռներն յուսոյ
Եւ մեր երկրէն փախ տա, ձբեռ
Չըքնազ երկրն մեր Արմէնիոյ
Երբ փայլէ իւր քաղցրիկ օդեր,
Երբոր ծիծառն իր բայն դառնայ
Երբոր ծառերն հազնին տերեւ,
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

Տեսի Դաշտերըն Սիւրիոյ,
Լեառն Լեբա՛ան եւ իւր մայրեր,
Տեսի զերկիրն Խալիբոյ,
Վենետիկ եւ իւր Կոնսոլներ,
Կըզզի նըման չիք մեր Կիպրայ,
Եւ ոչ մէկ վայր է արդարեւ,
Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

Հասակ մը կայ մեր կննաց մէջ
Ուր ամենայն իզն կ'աւարտի,
Հասակ մը ուր հոգի ի տեսնչ,
Յիշատակաց իւր կարօտի,
Յորժամ քընարն իմ ցրտանայ,
Միրոյն աալով զերջին բարեւ,
Եիթամ նընջել յիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

Ն. Առասինես

ՄԵՆՔ ԱՆԿԵԴՈՂ ԶԻՆԻՈՐ ԵՆՔ

Մենք անկեղծ զինւոր ենք, առանձին վիճակ
Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ,
Պարոկաստանի խորքից եկել խիստ նամակ,
Գնում ենք բարով կուշանանք տարով,
Վըիւն, սուր ու հուր, պատերազմի դաշտ
կոպառեն, մեղի:

15837

Դուշմանը մեղ տւաւ ջան ֆիդայ» անուն
Արգ էնւան համաձայն, տեսաւ զօրութիւն,
Մենք չենք ուզեր ազատ կամաւ բոնութիւն
Ուխտել ենք կուել, այդ սիրով մեռնել,
Համոզւած ենք որ այզպիսով միայն կայ մեղ
Վիրկութիւն:

Ստամբուլը պիտի լինի արեան ծով,
Աման կողմից կուր կոկի շուտով,
Կոստորենք Բաշկալայ, անցնենք հեշտ կերպով
Աջից վարդանը, ձախից իշխանը,
Գրաւենք Ազրակ, տարածենք սարուափ,
Փառք Դաշնակցութեան:

Բաշկալայ գաւառում, այն պատերազմին,
Աւելի մեծ սարսափ տիրեց Սուլթանին,
Բաջ Զէյթունը յաղթեց վաս, չոր դազանին
Կեցցէ Զէյթունը խլուխտ Սասունը կուսակ-
ցութիւնը.
Բաղդաւոր օրեր, պայծանք չուկաւն:

ՏԱՏԵՆԱԴԱՐԻՆ

ՄԱՅՐԸ ԻՐ ՈՐԴՈՒԽԵ

Այն քաջ մարդու շապիկն է.
Որ իմ ձեռքսվս կարեցի.
Արիւնու է, կարմիր ներկած,
Արտասուբով լուցի:

Դա շապիկն է այն քաջ մարդուն
Որ քեզի հայր կոչում է.
Վրէժ վրէժ չար ոսոխից
Փերեզմանից կանչում է:

Իէհ մեծացի. իմ նազելի,
Չարի արիւնը իմէ.
Քո մօր սրտին միմթարանք,
Ուրախութիւն պարզեւէ:



ՎՈՂԱՄՄԵՇՈՒԿ

Աշնան չորցած թփերու հետ,
Հօվիկ զայն էլ զլեց տարաւ.
Վաղաթորշան ծաղիկն անեղծ,
Դեռ չը բուրած իսպառ կորաւ.

Սեւ գերեզման մը փորեցին,
Լացող չեղաւ անոր վրայ.
Սիրոյ համար ծնած հողին,
Անսիրտ իջաւ ի գերեզման.

ՔԱՅ ԱԵԳՐԱՆԻԿԻՒՆ

Գարձեալ փայլեց Սասնայ գլխին.
Ազատութեան Դրօշակ.
Կեցցէ հայրենիք գոշելով,
Բարձրացրին աղաղակ:

ԹՇնգաց, որոտաց ձակներից
Թղջ աշխարհքը հայկական,
Խումբշիումը կորդած հայ զաւակներ
Հասնում էին օգնութեան:

Գուրգէն, Վահան, Հրայր Գժոխը
Քաջ Անգրանիկը ղեկավար,
Տալորիկի լեռներում,
Երջում էին անգատար:

Սարսափեցան քիւրդ ցիզէրը
Մինչ պալատը Սուլթանին,
Հրամայեց շատ կործանել
Դիրքերը հայդուկներին:

Անգութ քիւրդ ու տաճիկ,
Անսարան,
ուժեւ

Հներ,

ՏԱԼԻՈՐԻԿՑԻ ԿՑՐԻՃԸ

Տալորիկցի կըտրիճ բմ խորթ,
Քաղքըցու պէս չեմ թուրամորթ.
Սարի զաւակ, քարի որդի,
Հին քաջ հայոց եմ մընացորդ:

Տալորիկի զաւակ եմ քաջ,
Չեմ խոնարհիր թուրքին առաջ.
Քարուտ լերանց ես աղաս լաճ,
Չեմ տեսեր ո՛չ արօր, ո՛չ մաճ'

ՅԱՐԴԱՐԱԿ

Հայ ազբըրապիք, վայ ազբըրտիք՝
Տալորիկի զաւակ եմ քաջ.
Ազատութեան սիրուն համար՝
Եկէր զէպ ինձ, յառաջ յառաջ:

Երբ իմ աչեր բացի յաշխարհ
Ազատ տեսայ մար սար ու քար.
Մինչև վակիմ աչքս խաւար
Պիտ չի կոխէ հոս սար օտար,

իմ մամ ծնաւ զիս բալերու ծոց,
ինձ ընկուզկոծ մնելաւ օրբոց.
Տըկող ծընաց մեծցայ տրկող,
Կեսնորիս բաժինն է կոխւ ու բոց:

Առաքըս բորիկ, սիրաբս միշտ բաց,
Ի՞նչ փոյթ թէ քոյրս ալ մերկ մընաց։
Իմ մօտ մէկ է արե՛ բուք' ցուլս,
Բա՛ւ է չիշխեր հսս թուրը կամ բուլդ։

Իմ կեանըս խիստ է և չարբաշ,
Փափուկ կեանքի վայլից չեմ վարժ։
Բնակարանս է ապառաժ,
Ընկերս մըրիկ ու երկրաշարժ։

Թող այլը բնակին հավիտ ու գաշտ։
Վատ անգութին հետ ինին հաշտ։
Ես պիտ' մընամ միշտ աննըւաճ,
Թէկ վրաս դայ քըսան վաշտ։

Իսկի չքաշեմ բանի մկարօտ,
Բանի ունիմ գընդ ակ վառօդ։
Սղատ աղըեմ, մեռնիմ աղատ,
Սասնոյ որդին եմ հարազատ։

Յորենի տեղ կուտեմ կորեկ,
Երկաթ ծեծեմ գիշեր ցորեկ։
Եինեմ փէտատ, խոփ, խաչերկաթ,
Օանը է դատումս, բայց եմ աղատ։

Հարբատութիւն, ուսում, հանձար,
Պատիւ և փառք չեն ինձ համար։
Բա՛ւ է ունիմ ջիր, թուր, խանչար,
Բա՛ւ չի խրոխատը վրաս օտար։

Զէնքն է միակ իմ խաղալիք,
Կ'ատեմ հանդ արտ կեանք խաղաղիկ։
Կը սիրեմ որս, կըռիւ, աւար,
Կըսպասեմ երբ ընկնի հաւա՛ր։

Գիշերն ալ զէնք վըրաս քընեմ,
Երազիս մէջ կըռիւ կ'ընեմ։
Կըռւիլն ինծի մօտ խաղաղ է,
Կըռւով մեռնիլը հաւալ է։

Կըռւի մէջը մեռաւ իմ պապ,
(Այդ կերպ մահն է անուշ մըրափ),
Կ'ուզեմ ես ալ մահ մէջ կըռւի։
Որ իմ անուն անմահ գըրւի։

Այս քարու ո տեղ խիստ դժւարին,
Իմ քաջ պապեր երբ ընտրեցին։
Լոին' չազատ որդոց որդի
Քաջաց ոերունդ թո՛ղ հսս ապրի։

Եւ իմ խելօք ջոջ պապ Յարէ
(Առառուած հոգին լուսաւորէ,),
Ինձ կ'ըսէր միշտ «Աղքատ ապրէ,
Բայց մի՛ ծռէ վիզ, հարկ մի՛ վճարէ»։

Ալակայն միթէ կըրնա՛յ աղքատ
Կոչւիլ այն մարդ որ է աղատ։
Միթէ կա՛յ բան մ'աւելի թանգ
Բան անիշխան և աղատ կեանք։

Տալւորսկն է սե սարեր,
Խոր մութ ծործորք, սեպ սեպ քարեր.
Վերև ջու խտակ ծեր Մարտիռուն,
Հոգիս մատա՛ղ մեր Մարտիռուն:

Մեզնով պարծի այսօր Մասուն,
Մենք ենք խրախոյս հայոց նրկուն,
Տալորիկ սար, ժէռուտ Զէյթուն,
տա՛ն իրարու ազա՛տ ողջոյն:

Յաղորակ

Հա՛յ ազբըրտիք, վա՛յ ազբըրտիք,
Տալորիկի դաւակ եմ բաջ.
Ազատութեան սիրուն համար,
Եկեր գեպ ինձ, յառա՛ջ, յառա՛ջ:

Մ. Տամասեան

ԽԱԽԱՐԵԼ ԵՄ ԻՆՉՊԵՍ ԳԻՇԵՐ

Խաւարել եմ ինչպէս գիշեր
Իմ չորս կողմա է վոթորիկ.
Չաւնեմ ես սէր, չաւնեմ ես սէր,
Ես սիրում եմ իմ հայրենիք:

Այնտեղ անթիւ անքախու մայրեր,
Որդեկորոյս ծնողներ.

Եղբայրազու րկ անթիւ քոյրեր,
Թափում են յորդ արցոնքներ:

Ինձ մի սիրիք ինձ մի սիրիք:
Ես չատ ու շատ փոխել եմ.
Առ թաշկինակդ որբիք աչերդ.
Ես քեզ սիրել չեմ կորող:

Մնաս բարեւ իմ աչքի լոյտ,
Սէրդ լինի ինձ խրախոյս,
Արդ արտասուքը ես պիտ թափեմ
Որ իմ ցաւերու ափոփեմ:

Ախ աւէր ինձ բաղյլ մի քուն
Կեանքըից հեռու սլանամ
Այն աշխարհը ուր ինզութիւն
Ուր սէրն է միշտ անթառամ:

ԵՐԳ ՄԱՐՁԻ

Քազզր Հայրենեաց ազատութեանը համար,
Եւ լուսափիւռ ուուրք հաւատոյս վեհափառ,
Այս երկու վեր տոթիւս ահա
Թէ ինձ մեռնել արժան չըլլաւ
Կեանքն ինձ ալ ինչ կը ծառայէ
Երբ գերութիւնն այսպէս տեւէ:

Ո՞վ սուսերդ իմ վաղակաւոր սայրասուր,
Եւ զու հրաշան որ կը ժայթքես բոց եւ հուր,

Վատ թշնամին իորդակեցէք
Եւ զրանաւորն նուսճեցէք
Իեցջիք միշտ իմ հրացան սուսեր,
Չեօք հայրենեացս կանգնին աւեր:

Ո՞վ սուսերդ իմ երբ տեսնեմ քնզ շողչողաս,
Եւ դու հրացանդ իմ սէւսդէմ՝ որոտաս,
Վատ թշնամոյն՝ իրանն փըռուի,
«Աւա՛ղ» կանցէ՛ ։՝ այնպէս մեռնի,
Աւպրին միշտ մեր հէք հայրենիք,
Կեցցեն միշտ մեր վեհ հայրենիք:

(Խարզմ. ի Յուն.) Մ Յ. Տամատեսն

Հ ՔԱԶՆ ՎԱՐԴԱՆ

Իմ հայրենեաց արեւ Վարդան
Հոգիս հոգւոյդ եղնի դուրպան,
Որ Տղմուտի ափզրին քով
Վաթսուն հազար կտրիներով
Ջարկիր զարկուար, ինկար քաջ քաջ
Պարսկի սփռած և ձախդ ու յաջ:
Իմ հայրենեաց արեւ Վարդան
Հոգիս հոգւոյդ եւն.

Աւետարան ու Խոչն առեր
Տարիք յերկինս բարձրացուցեր,
Եւ դու ալ յետ թողիր դացեր
Անուշ արեւդ հոգին տո իր.
Որ հայունեաց վարդեր բացուին.
Երգէ պլասւ զրւիտի սարին:
Իմ հայրենեաց արեւ Վարդան
Հոգիս հոգւոյդ զ.ն.

Արիւնդ կարմիր թափուաւ,
Դաշան ու պարտէզ ներկուեցաւ,
Լուսնակն եկաւ ամպի տակից
Պաղ պաղ թափուց ցօղիկն աչւց.
Որ հայրենեաց վարդեր բացուին,
Երգէ պլասւ զրախտի սարին:
Իմ հայրենեաց արեւ Վարդան
Հոգիս հոգւոյն եղնի դուրպան:

Սիմոն Հ. Մ. Ֆելիկե



Ի ՍԴԱԼԻ ՄԱՀ ԶԷԹՈՒՆՑԻ ՊԱՏԱՆԻԱՑ

Դու զո՞վ խնդրես մայր իմ անուշ,
Եկ, մի՛ զողար, մօտեցիր հոս,
Անլաց աչօք դիտէ զորդիդ.
Ու իւր վէրթերն արիւնահոս:
Թրքաց մայրեր թող լահ, ու դուն
Ուրախ լուրեր տար ՚ի Զէթուն:

Ինչպէս երթեմն օրբանիս մէջ
Կակուզ ձեռամբ փայխայելով,
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր,
Իրեւ հրեշտակ նուագելով.
Զիս հանգչիցուր ի հող, ու դուն
Ուրախ լուրեր տար ՚ի Զէթուն:

«Նորեկ օրդւոյս կենացն արեւ
Զեզի համար փայլի հ.յիր .»
Այսպէս յայնժամ դու երգէիր
Օրօրոցս նստեալ քօվեր.
Անոնց համար ՚ի հաւաւ, ու դուն
Ուրախ լուրեր տար ՚ի Զէթուն:

Կարմիր կայլակը ցայտեն վէրքէս,
Սակայն մայր իմ նայէ չորս դիս,
Զարիւնը ուշ թուրքերն տե՛ս,
Հաղարներով փոռւած գետին.
Կերտաւ զանոնք առւր մեր. ու դուն
Ուրախ լուրեր տար՝ ի Զէյթուն:

Ինչպէս վիշապ մրոնչելով.
Ու մեր վրայ յարձաբեցան,
Ցնցեց Զէյթուն՝ գյուին ժայռոտ,
Իւր վհաց մէջ թօթափեցան,
Կարմիր ներկան ձարձք մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար՝ Զէյթուն:

Ու ծափ զարկին մե, ըարց ըստուերք,
Թէ չէ մեռած հայոցս կրակ.
Ու ցնծացին այնչափ զոհեր,
Զի լուծաւ վրէժ յօրեան վտակ.
Խնդաց Մասիս, մայր իմ եւ դուն
Ուրախ լուրեր տար՝ ի Զէյթուն:

Վերջին համբոյր տամ քեզ մայրիկ.
Հատուցանես զայն սիրուհոյս.
Վերջին անգամ գրիեմ մեր հոգ,
Ուր արդ իջնեմ՝ ի ծոցն անլոյս,
Խաչ մի տնկէ վրաս, ու դուն
Ուրախ լուրեր տար՝ ի Զէյթուն:

Մ. Պէջիկքաշիան



ԱՐԱՔՍԻ ԱՐՏՍՍՄԻՒՔԸ

Մայր—Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ,
Հին Հին զարոսց յիշատակ
լեաց մէջը պըտրում եմ:

Յայց նոքա միշտ յեղյեղուկ.
Պըղտոր ջրով եզերքին
Դարիւ զարիւ իւշիելով
Փախչում էին լալազին:

—Արաքս ինչո՞ւ ձրկան, հետ
Պար չես բոնում մանկական
Դու զեռ ծովը չը հասած.
Սըդաւոր ես ինձ նըման,

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Բու ոէզ, հապարտ աշերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Սյդ հարազատ ափերից:

Մի՝ պըղտորի յատակը
Հանդարտ հաէ խալտալով,
Մանութիւնը քու կարճ է.
Շուտ կը հաօնիս դէպ ի ծով:

Վարդի թրիեր թող բունին.
Բու հիւրընկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչեւ առաւօտ:

Մըշտաղալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քո ջըրին,
Ճըկուն սստըն ու տերեւ
Թող թաց անեն տափ օրին:

Ափերիդ մօտ երգելու,
Հոգիւք թո՛ղ գան համարձակ,
Գառն ու ուլը քու վճիւռ
Զուրը մանեն միշտ արձակ: —

Մէջքը ուսցութ Արաքսը,
Փրփուր հանեց իր տակից,
Ամպի նման զոռալով՝
Էսպէս խօսեց յատակից:

Յատակըս պարզ ու վճիտ
Կոհակներըս ոլորուն
Լուսաբերը մրնչեւ այդ
Ջըրիս մէջին էր լողում:

«Ի՞նչըս մնաց այն օրից,
Ո՞ր ջրամօտ գեղերքս:
Ո՞ւր իմ չէն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերքս:

Տուրքը ջըրի ամեն օր
Իմ սօւրբ ծոցէն Արարատ,
Մայրափընամ ինձ որնունդ
Պարզեւում է լիտատ:

«Բայց ես այն սուրբ ջրերով.
Սուրբ Յակոբայ աղբիշըրին:

Պիախ ցողեմ և ըտօրա՞/ք
Իմ ամելի օտարին:

«Եամ կենսատու իմ ջրով
Ովերից մօտ կը կը զած՝
Իր ձեռնե՞րը լուանայ
Գողն՝ աւազակը հոտած

«Մինչ իմ որդիք (ո՞վ գիտէ)
Ծարաւ, նօթի: անտէրունջ.
Օտար աշխարհ յածում են
Թոյլ ոտքերով կիսաշունջ. . .

«Հեռո՞ւ հեռո՞ւ քշեցին
Բընիկ ազգը իմ հայկեան,
Նորա տեղն ինձ տօ: ին
Ազգ խըստասիրտ, մոլեկան:

«Դոցա համա՞ր զորդարեմ
Իմ հիւրընկալ ափերը,
Եւ կամ զոցա՞ հրապուրեմ
Ճըկոռտ. պըլւաճ աչերը:

«Քանի որ իմ զաւակունք
Էսպէս կու մնան պանդուխտ,
Ինձ միշտ սրգ: որ կը տեսնէք
Այս է անխափ իմ սուրբ ու խտ:»

Էլ չը խօսեց Արաքսը:
Ջործանք տուեց ահաղին:
Օղակ օղակ, օձու պէս
Առաջ սողաց մոլեզին:

Ո. Տ. Գ. Պատկանեան

ԵՐԳ ՊԱՆԴԱՒԽԸ ՊԱՏԱՆԵԿԻ

Միծեռնակ, ծիծեռնտկ,
Դու Գարնան սիրոն թռչնակ,
Դէպ ի ո՞ւր ինձ ասա,
Թրոշում ես այդպէս արագ:

Այս, թէռի՛ր, ծիծեռնակ,
Ծընած տեղը Աշտարակ
Անդ շինիր քո բոյնը՝
Հայրենի կըտուրի տակ:

Անդ հեռու ալեւոր
Հայր ունիմ սըգաւոր,
Որ միակ իր որդուն
Սպասում է օրէ օն

Երբ տեսնես զու նորա'
Ինձնից շատ բարեւ արա.
Ասա, թող նստի լայ
Իր անբազդ որդու վրայ:

Դու պատմէ, թէ ինչպէս
Աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով
Կեանքս մաշուել, եղել է կէս:

Ինձ համար ցերեկը
Մութ է շրջում արեգը,
Գիշերը թաց աչքիս՝
Քունը մօտ չէ գալիս՝

Ասի՛ր, որ չի բացուած
Թառամեցայ միացած,
Ես ծաղիկ գեղեցիկ՝
Հայրենի հողից զրկուած:

Դէ՛հ, սիրոն ծիծեռնակ,
Հեռացի՛ր, թոփ՛ր արագ.
Դէպ Հայրոց երկիրը՝
Ծընած տեղը—Աշտարակ:

Գ. Ա. Դարտիկեան

ԵՂԲԱՑՐ ԵՄՐ ՄԵՆՔ

Ի բի՛ր ձայնից բնութեան ձքեղ
Թէ երգք թոշին սիրողաբար,
Մատունք կուսիտ ամենազեղ
Թէ որ զարնեն փափուք քընար,
Զունիմ ձայն մի այնքան սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն:

Տու՛ր ինձ քու ձեռքդ եղբայր նմք մեն,
Որ մըրըրկաւ էինք զատպած,
Բաղդին ամեն ոխ չարանենգ՝
Ի մի համբոյր ցըրուին ի բաց:
Էնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:

Երբ ալեւոր Մայրն Հայաստան,
Տեսնէ զորդիս իւր քովէքով.

Սլրոին խորունկ վէրքըն դաժան՝
Քաղցր արտասուաց բօւժին ցօղով:
Բնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն, եւն.

Մէկտեղ լացինք մենք ի հընում,
Եկէ՛ք դարձեալ յար անբաժան
Խառնենք զարտօսր եւ բգիւղում,
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան:
Բնդ աստեղօք ի՞նչ կոյ սիրուն, եւն.

Մէկտեղ յոգնինք, մէկտեղ ցանենք,
Մէկտեղ թափին մեր քըրտինքներ:
Ըզհունձ բարեաց յերկինս հանենք,
Որ կեանք առնուն Հայոց դուշտերէ
Բնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն, եւն.

Մ. Պէջիկբաշեան



Ե Ր, Փ

Զայն տուր ով ծովակ, են՛ու լոռւմ ես,
Ողբակից լինեւ չկամիս զըժբաղդիս,
Շարժեցէք զեփիւոք, ալիքը վէտ վէտ,
Խանեցէք զարտասուս այս ջրերի հետ:

Հայաւտանի մէջ անցքերին վրկայ,
Սկիբրից մընչեւ այժմ իննդրեմ ինձ ասա,
Միթէ միշտ այսպէս պիտ' մնայ Հայաստան
Փշալից անապատ երեմն բուրաստան,

Արգեօք գալո՞ւ է մի օր ժամանակ,
Մասիսի գլխուն տեսնել մի դրօշակ,
Եւ ամեն կողմից պանդաւխա ազգայինք
Դիմեն դէպ՝ իւրեանց քաղցր հայրենիք:



ՀԱՅՐԵՆԻՔ

Իմ հայրենիք զիս կը կանչէ,
Հեռու եմ Հայաստանէն
Հայու որդոյն կը վայելէ
Հեռանալ Հայաստանէն:

Միթէ արծաթ, ոսկի, գոհար
կը սփոփէ Հայաստանը
Այն որ կողբայ որդւոց համար
Խըզձալի Հայաստանը.

Եյոր տիսրութեան մէջ է թալուեք,
Թագուհի Հայաստանը,
Բոպիկ ոտքով, արձակ մազով
Կ'արտասուէ Հայաստանը:

Անդութ երկինք ալ չը յիշեք,
Մսոցեր է Հայաստանը,
Անտիրտ հայեցն ալ չին յիշեք
Անուշիկ հայաստանը:

Ո՞չ, թաղէ՛ք զիս խօսիմ ազատ,
Երգեմ միշտ Հայաստանը,

Անուշ երկիր, կոյս անարտա,
Ահնըման Հայտառանը,

Արեւ ձածկեր է իր գէմքը
Կյուար է Հայտառանը,
Հայոց արեւն ալ մարեր է:
Մեւ հագեր Հայտառանը,

Թշուառ սրախ ձայն կը կորէ,
Ոզբալով Հայտառանը,
Անհ, չի կայ հայ որ ըստոփէ:
Նուաղեալ Հայտառանը:

Մինչեւ կըսրի իմ վերջի շոնչս,
Պիտի կանչեմ Հայտառան
Պըլուխմ մէյ մ' իմ հայրենեացո
Հասպա մրտնեմ զերեզ օնու:

Անդորրութիւն ես կը խնդրեմ
Միբելի Հայտառանին,
Կըսրիլ այս ձայնս չէ չէ կարող
Սոսկումըն զերեզմանին:

Ա. Հայկումի



Գ. Ա. Բ Ա Կ Ե

ԱՌ ի՞նչ անուշ և ինչպէս զով
Առաւօտոց վրչես հովիկ.
Ծաղկանց վրաց զուրզուրալով
Եւ սաղերուն կուսին փափկիկ.
Բայց չես հովիկ իմ հայրենեաց,
Գընա, անցիր սրբաէս՝ի բաց:

ԱՌ, ի՞նչ աղու եւ որբազին
Ծառոց մէջէն երջես թրւնիկ.
Սիրոյ ժամերն ի յանառին
Զժալլեցան ՚ի քո ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց
Գընա՛, երգէ սրբաէս ի բաց:

ԱՌ, ի՞նչ մրմունջ հսնես, վտակ
Ականակիտ եւ հանգարանիկ.
Քու հայելոց մէջ անապակ
Նային զիրենք վարդն ու ալջիկ.
Բայց չես վտակ իմ հայրենեաց,
Գընա՛, հստէ՛ սրբաէս՝ի բաց:

Թէպէտ թռչնիկն ու հովիլ Հայոց
Սւերակաց չըրջին վերայ,
Թէպէտ պղտոր վաակն Հայոց՝
Նոճիներու մէջ կը սողայ,
Նոքա հառածք են հայրենեաց,
Նոքա չերթոն սրբաէս՝ի բաց:

Մ. Պէշիկրալլեան

— 36 —

Ա Ր Տ Ա Ս Ո Ւ Ք Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

Քանի տարի է Հայրենիք սիրուն
Դասն ցաւելով եղեալ եմ նկուն
Սար ու ձոր ինկած իբր խեզճ թաշուն,
Վեր առ զքնարդ ով քաջ զիցազուն.
Աղբամ Հայաստան ափսոս Հայաստան,
Ա. ա'զ Հ յաստան, քաղցր իմ հայրենիք:

Հայաստանի մէջ զանազան ազգեր,
Իւր խեղճ որդիքը պանդուխտ ու անտէր,
Քաղաքք ու աւանք անբնակ աւեր,
Ա. երակ անչէս են հայց տներ,
Աղբամ Հայաստան եւն:

Մթնցաւ հայու պայծառ լուսատուն
Խեթիւ հայեցաւ տէն գերագոյն,
Միշտ սյսպէս ձմեռ ե՞րբ հապա գարուն,
Արի նստինք լանք մռասայդ հայկազուն,
Աղբամ հայաստան եւն:

Ինչո՞ւ դու արդպէս օվ վերին տնտես,
Հայու խեղճ աղգը առարեր անտես,
Ե՞րբ արգիօք դու մեզ լոյս պիտի ծաղես,
Եւ բարի իշխան մեզ պիտի կարգես,
Աղբամ Հայաստան եւն:

Ազատութեան այն վառ սէրը
Թունդ որոսաց իմ սրտում
Իմ հայրենիեաց սուրբ անունը
Ինձ պատերազմ է կանչում:

Ելէք ելէք հայկազունք
Ելէք Հայկայ զաւակունք
Ելէք ելէք հայ եղբայրներ,
Առէք ձեր առը ու զէնքեր:

Ահա եղբարք, հայ եղբայրներ,
Առէք զրահ, սուր, զէնքեր,
Մահը զաշուում Շաւարշանայ
Մեզ հրաւեր կը կարդայ:
Ելէք, ելէք հայկազունք,
Ելէք հայկայ զաւակունք եւ այլն

Ահա հայրենիք, սուրբ անունդ,
Անջինչ վառի իմ սրտում,
Մեր հայ եղբարց շիրմիները,
Իւրեանց գիրկն են մեզ կանչում:
Ելէք ելէք հայկազունք եւ այլն

Այն օրերը մեր քաջ կեանքին
Եռիրական թող լինին,
Ով սիրում է աղատութիւն,
Թող չի ժունայ հայ անուն:
Ելէք ելէք հայկազունք եւ այլն



Ա Բ Հ Ե Զ Ո Կ

Հեռաւոր երկիր նստած դու նժդեհ,
Հայրենիաց բախտին մօտուոտ ես տեղեակ
Քարող քաջարի նոր սկզբանց վիճ,
Յեղափոխութեան ձայնատու Հնչակ:

Նոր գաղափարի քո ցանոծ սկըման
Ազնիւ պառուզներ հասնենան արտգ
Կարին եւ Պօլիս որուաման նման
Սնդրանիկ շարժմունք ծնան քեւ Հնչակ:

Զար բանուկալը հայոց կեղեքիչ,
Վասիկն պահեցաւ ոսկի գահին տակ
Կուլ Եւրոպայի թնդաց մէն դահլիճ,
Հայը ցնցեցաւ կարմրեցաւ Հնչակ:

Այսօր քո սերմանց նոր պառուզք տնաւ,
Հասած կարմրին արեան նմանակ:
Կենաց եւ մանու սուրբ ժամ մերձենայ,
Կարմրի հրաւերիդ ակն ունինք Հնչակ:

Կոչնակդ հնչեցուք, հնչեցուք սրագ,
Թող հայք ոտք ելլեն ձաղէ մինչեւ ծաղէ
Փշրի ժանոտ շղթան, ձաղէ նոր արեւ,
«Ա.Զ.Ա.Ց ԵՆՔ» հնչէ ոսկեզօծ ՀՆՉԱԿ:

Մ. ՏԱՐԱՏԵԱՆ

Օ Բ Օ Բ

Արի՛, իժ սոխակ, թող պարսէզ մերին,
Տաղերով քուն բեր տղիս աչերին.
Բայց նա լալիս է, գու, սոխակ, մի՛ դաց
Իմ որդին չուզէ արեղայ դասնոլ:

Եկ, արեղանակ, թո՛ղ արտ ու արօտ,
Օրօրէ արզիս, քնի է լարօտ.
Բայց նա լալիս է, գու, ձայուկ, մի՛ դայ
Իմ որդին չուզէ արեղայ դասնոլ:

Թող գու տառակիկ, քու ձագն ու բռնը,
Վույզովավ արյիս բեր տնուշ քունը.
Բայց նա լալիս է, տառակիկ մի՛ դար,
Իմ որդին չուզէ որդառը դասնոլ:

Կաչաղակ ճարպիկ, զող, արծաթաւէր,
Շահի զրուցավ որդուս քունը բեր,
Բայց նա լալիս է, կաչաղակ մի՛ դար,
Իմ որդին չուզէ սովորաքար դասնոլ:

Թող որսրդ, արի, քաջասիրս բողէ,
Բու երգը զուցէ իմ որդիս կ'ուղէ,
Բաղէն որ եկաւ, որդիս լուցաւ,
Ռազմի երգերի ձախով բնեցաւ:

ԳԱԼՅԱՌ ՅԱՅԻՊԱ



ԽԱՆՈՒՄ Ե ՀԱ ԶԱՆ

Բերդիցը գուբա ելայ Ալաղեազ տեսայ,
Խանում, Եւա ջան.

Արարանը աչքերիս դուման ա գառել.
Դուն կեցիր բարով, ևս կերթամ լալով,
Լալով ողբալով. քիօչ ու բարիսանով,
Սարեր ման գալով:

Աչխարն էսաին կ'արածայ, էնդին գառները,
Խանում Եւա ջան,
Կանչըցել ա ծաղիկները, ծառերը,
Դուն կեցիր բարով եւլն.

Արի երթանք քու ման՝ գալած արտերը,
Քեզի տեսայ, թաղացաւ իմ գարդերը:
Դու կեցիր բարով եւլն.

Չեռ ու ոտս կապին՝ բերդը գրեցին,
Չուխա շալվար լալով տունը բերեցին.
Ջրեր, գարնան օրեր զուք բօւք էք կորեր:

Ես Ալեքն եմ չամոլեցի մէկ ջիւան,
Տւթազ եղայ ըստուց ջուրի Երեւան:

Դուն կեցիր բարով, ես կ'երթամ լալով,
Լալով ողբալով. քիօչ ու բարիսանով,
Սարեր ման գալով:

Ա Ր Ճ Ա Խ Ա Ն Ք

Դատարանի գաշտում՝ գատը վերջացաւ,
Մեր հայ մանկանց սրաեր յոխով լեցւեցաւ
Մեր հայկական մի խուժք Կօսոլէն անցաւ,
Արշաւենք, սիրելիս, դէպի Վան,
Արշաւենք, հայ տղերք, դէպի Հայաստան:

Հայդուկների ճամբան Դամբան Դաւրէզ, Յաւթւ
Կանչեցէք հայ տղերք պատրաստուած թու
Մէջքերնին պատրօնտաշ, ձեռներ հրացան
Արշաւենք, սիրելիս, դէպի սիրուն Վան,
Արշաւենք, հայ տղերք, դէպի Հայաստան

Եկէք դուք, հայ տղերք, վառուած սր
Ճայբորդել սկսինք քաջ ընկերներով.
Հալածենք վաս թուրքին փայլուն գէնք
Արշաւենք, սիրելիս, դէպի սիրուն Վան,
Արշաւենք, սիրելիս, դէպի Հայաստան:

Կանչեցէք, հայ տղերք, յոյսով հաւաք
Ուղենք մեր մաղթանքներ սուրբ սրտէ
Մեզի օգնական է Աստւած պետական:
Արշաւենք, սիրելիս, դէպի սիրուն Վան
Արշաւենք, հայ տղերք, դէպի Հայաստան



Մ Ա Կ Յ

Թո՞ղ պղպուլ չերդէ Մշոյ դաշտերում,
Թո՞ղ երդ չնչէ Ասոնոյ լեռներում.
Թո՞ղ ժայիտ չըդայ հայերու ո գէմքին,
Թո՞ղ թախիչ ամիրէ հայերու ոյսին:

Հայի ձեռքեր արինով ներկուած,
Հայոց սրտեր վշտով է պատուած.
Ալ ինչո՞ւ ծաղիկ քաղցեանու շուշոն,
Հայոց Եղեմի զայտում ուննուան:

Քանի՞ հայ աղջիկ չէ զարդարելու,
Ծաղկով իր կուրծք շքեղ պճնելու,
Թո՞ղ երդ չնչէ Մշոյ դաշտերում,
Թո՞ղ պղպուլ չերդէ Ասոնոյ լեռներում:



Շ Ա Հ Ա Զ Ի Զ Ե Ա Ն Ի Ե Բ Բ Ա Զ

Ես լրսեցի մի անուշ ձոյն
Իմ ծերտցած մօր մօս էր.
Փայլեց նըշոյլ ուրախութիւն,
Ա՛խ ափասս որ երազ էր:

Կորկաջանոս ազրիւր այն անդ,
Թաւալում էր մարգարիտ,
Նու լըստակ էր որպէս բիւրեղ,
Ա՛խ ափասս որ երազ էր:

Եւ մեղեդին արխուր մայրենին,
Ցիւց մանկութեանս օրեր,

Մօրըս համբոյր հո ըղգացի,
Ա՛խ, ափսոս որ երազ էր:

Կուրծքին սեղմեց կարօսագին,
Աշերը սըրբեց, շատ թաց էր.
Բայց արտասուք զընում էին,
Ա՛խ, այդ ինչո՞ւ երազ էր:



Ե Բ Գ Վ Ա Բ Ի Ա Ն Ա Յ

Լոեց—Սմպերը եկան ծածկեցին,
Երկինքն ու լուսին աչքէս խուցին.
Մնացի մենակ հոգիս վրոպած,
Չեռներս ծոցիս, գլուխս քարչ տրած:

Եւ այնուհետև ամեն իրիկան,
Մնում եմ լուսնի խաղաղ ծաղկելուն,
Երա ախրամած գէմքըն նայելիս,
Ցիցում եմ թշւառ վիճակը աղջիս:

Ա՛խ ցօլա՛, փայլէ ախրագէմ լուսին,
Գուցէ քու փայլեց փայլ տառ եւ հային:

Պատմէ շատերուն վարդանի մահը
Կամ ինչպէս կորու հայ աղջի գահը,
Կամ ինչ վիճ սիրով սիրում էր վարդան
Մայրենի հոգը. աշխարհն Հայաստան:

Քամառ-Քարիսա



Ի Զ Ե Ն Հ Ա Յ Ե Ր

Ի դէն հայեր, ի սուր եւ ի հրացան,
Տաճկահայաստանէն կոչում է մի ձայն.
Լեռնից լեռ թնդում է ահեղ հրաման,
Թռէք՝ հայեր, թռէք՝ դէպի Հայաստան:

Արիւելք, արեւմուաք, հարսւ ու հիւսիս,
Դրդաց թնդաց քաղցր աւետիս.
Հայկայ քաջ զաւակաց առոյդ կրծքերից
Ս.զասութիւն հնչեց, ամէն կողմերից:

Խումբ խումբ հաեր դէպի Տաճկահայաստան
— Փրկութեան աւետիս առած ի բերան —
Դիմում են ցնցութեանը իրբեւ հարսանիք,
Ուխտած սուրբ արիւնով փրկել հայրենիք:

Տաճկահայաստանը ոտքի է կանգնում
Արիւնածարաւ վրէ՛ժ, վրէ՛ժ է գոչում.
Վրիւնով ներկւում են բոլոր գաշտերը
Լոկ արիւն են հոսում բոլոր գետերը:

Թշնամին զարհուրած փախուստ է դիմում,
Անթիւ աւար ու դանձ հայերին թողնում
Յաղթութիւն, յաղթութիւն գոչենք միաձայն
Թշնամին յաղթւած է. կեցցէ Հայաստան:



Ս Ի Փ Ա Ն Ա Յ Յ — Ս Ա Յ Ե Ր

Լօ՛, լօ՛, Սիփանայ սէգ սարի վրայ,
Կարիճներ ըշտապելով գալիս են միանում.

Այն տեղ անյաղթ որդիք անյաղթ հսկայ լերան
Զէնք ու զրահի են ընթանում:

Ի՞նչու վառում են զինուում,
Սանձակոծ ձի հեծնում անհամբեր
Արիւնը նոցա բորբոք սրտի մէջ եռում,
Փայլում, անցնում անհամբեր:

Քանց Սիփանա պինդ քամին
Սըլանում է դէպի ցած, գաշտի մէջ է թշնամին
Նա վառում նորանց վըրէ՛ժ անմոռաց
Ահեղ կուի մէջ վատ թշնամին:

Հատու սուսեր է հանել, ցեղապետին սպանել
Նա վառում է քաջերին.
Բոլոր ցեղն այժմ ոտքի է կանգնած
Թշնամու ընդդէմ մահու մարտի է կանչում:

Արեան մեծ վրէ՛ժ է թշնամուց պահանջում
Ու թշնամին պարտած թողնում փախչում սա-
րէ սար,
Յետ է ձըգում մեծ աւար.

Արիւն թափեցին, արիւնի փոխան
Արիւն խմեց ծարաւի սուսեր.
Նորան յագեցած դըրեցին պատեան
Ելնում են հիմա սէգ Սիփանն ի վեր:

Սէգ Սիփանա կանաչ գլխին,
Յաղթող ցեղն անում է մեծ խնդում.
Եւ ամպերի բարձրութեան միջից,
Հսկայ Սիփանն է երիւում:

Եւ չգայ մեզ մօտ թշնամին,
Սուր տեսաւ մեր պողովատին:

ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆ ԱՌ ԾԻԾԵՌՆԱԿ

Ո՞գ ծիծեռնակ, վարանած թռչնիկ,
Ին'չ տխրագին ձայնիւ
Կ'եղանակիս մօտ իմ բանտիս,
Միթէ վարուժանդ սիրուն
Հոռ միտյհօտի թողուց քեզ,
Եւ դուն անմխիթար կը հեծեծես.
Ո՞հ, լաց ուրեմն ինծի պէս:

Բայց երանի քեզ, բիւր երանի,
Կրնաս թռչիլ թեթեւ
Թեւոցի իծայր ընդ սար և ձոր.
Խոկ հոս՝ արեւուն նեշոյլն աղօտ
Մութ բանտիս է անթափանց.
Եւ ոչ մեզմ հովիկ ո՛ ալ կը փչէ:

Գէթ դուն գնա՛ գտնել սիրելիդ.
Սլտցիր արագ, տակայն
Դարձիր նորէն մօտ չւասիս,
Եւ հոս հանգչէ այս իրիկուն.
Կեր դու վկայ տիւուր մահւանս.
Եւ իմ շիրմիս վրայ ճըւճւալով
Գէթ դու յիշէ զիս անմոռաց:

ՎԱՆԻ ԿՈՑՈՒՅԱԾԻ

Մ'ի զեղեցիկ պարզ զիշեր էր
Երկինքը լի ասաղերով.
Եւ լուսինը մեզմ փայլուք էր,
Կաթնառնան իր լուսով:

Նա նարու էր լոիկ մնջիկ
Իրրեւ մի կոյս գէպի վան.
Նրտ աչքին երեւուք էր
Բիւր ցաւալի տեսարան.

Նա անմնում էր անթիւ քիւբուր
Բանած սուր, թուր, հրացտն,
Կուռքաւմ են, կազոպաւմ են,
Աւերաւմ են անսէր վան:

Եւ կործես թէ վեր երկնքից
Խօսու էր ազդ լուր վկան.
Ավայ հասիր, հայ ազգասէր,
Զիռքից կ'երթոյ Հայաստան»

Ա. Սա /արեսեց



ՕՐՈՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Քընէ՛, քընէ՛, իմ հայրենիք,
իմ կաթողին Հայուսան.
Ես քեզ օ՛ր օ՛ր կ'առեք մեղքիկ,
Որ չըպարթիս անգու ան:

Քանի՞ գարեր այդ խոր քունը,

Քեզ կաշկանդել, կապել է.

Քընի մերսունք, անես, Մորփէն,

Լոկ քու վրայ թափել է:

Եւ ի՞նչ զարմանք, ազգ որ աղինք,

Միշտ լաւակա՞մ քեզ համար.

Քունըդ վրովիել չուզիլով՝

Օրօրում են անգաղար:

Քեզ . . . թուր ձեռը բռնած,

Մարդ չի թողնում քեզի ժօտ.

Թէ մօտ եկա՞ն՝ զարձեալ չէ՝ փայթ,

Ունի շատ սումբ, շատ վաւող:

Որ աչքերդ չի խոսադին,

Վտու շողերը արեգին.

Անթափանցիկ ու մեծ ասպար,

Ունի բռնած իր ձեռքին:

Կամ թէ՝ անուշ քընիդ խոփան,

Զլինեն նաեւ քու որդիք.

Հապառազէն պահապահներ,

Անոնց վրայ կան հերիք:

Թէ ձիչ բասնամ՝ այն ժամանակ,

· · · · ·

Այդ պատճառաւ հենց քու որդիք.

Եւ երկու ևն, ևւ զգաստ:

Այդ՝ գու ննջէ՝ ծանր քընով,

Ու մի՛ զարթիք շատ զարեր.

Պարտքն աշխարհի քու տուել ես,
Կատարել ես շատ բաներ:

Ունիս քաջեր թթէեւ մեռած),
Ունիս գրքեր անհայար.

Միալի գործք քու զաւակաց,
Կ'անցնին, կ'երթան դարէ դար:

Ասուածախօս քու լիզուն է,
Ծոցդ գըրախտ երկրաւոր.

Նոցա սերունդք են քու որդիք.
Դէ՞հ Հայաստան իմ, օ՛ր, օ՛ր:

Երբեմն գու լիխտա լաւ կ'անիս,
(Ոյս քեզ խրատ իմ բարի.

Հաւատացի՛ր, սրտով բաղձամ,
Որ այդ ձշիւ կատարի).

Թէ սեփական զաւակներիդ,
Տաս խրատներ մայրական.

Որ կործանած իրենց գահը,
Վերականգնել չի ջանան:

Ծուտ շուտ խրկէ քարողիչներ.

Սեւազըլուի մրգաւոր,

Որ յորդորէն ազրիւ նոցա,

Թշիւ ստրուկ, բայց անզորր:

Խազազասէր կեանք քարոզեն,
Մեծ մեծ յոյսեր երկնային.

Ազնիւ զգացմանց ցընորք ասեն,
Անօգտաւէս բընուախն:

Չի հասկանուն վախճան կենաց
Կոյր են եկել կոյր երթան.
Կրօնքն էլ ինչպէս հարք էը մեկնեն,
Անոնք ոյնպէս հասկանուն:

Սոքուր կրօնն է, առն պազը,
Ժամաց ոռլը, ոսի ոպքիւը.
Կուշ ուտելը յարգոյ հարց.
Այս է վախճան մեր կենաց:

Դիբահաւան մեր հայերը,
Բարի խրատը լըսելով
Զեն վրդովիլ, ու քեզ կուտան,
Լաւ կըշտանուլ խոր քընով:

Դէհ, ի՞չ պառաւ մայր Հայաստան,
Քընէ՛ առուշ ու անզորը.
Սյսպէս յաւերժ քեղ կը կարդան,
Ազգ ու ազինք օ՛ր, օ՛ր, օ՛ր:

Քամառ-Քարիստա



Ա Ն Գ Բ Ա Ն Ի Կ

Իբրեւ արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ
Թնդտցնում ես երկինք-գետինք տենչավառ,
Սուրբ անունդ պիտի յիշւի դարձդար,
Հոկայ լերինք քեղ ապաստան Անդրանիկ,
Քիւրդ ու տաճիկ երբ լսեն քու անունը,
Օձերի պէս պիտի սողան իրենց բունը.

Երակներիդ ազնիւ քաջիւարիւնը
Ջը ցամաքէ մինչ յաւիտեան, Անդրանիկ:

Հայոց կուտանք, թափնեայ պատկ թող հիւսեն,
Թնդոյշ ձեռամբ քո ճակատը պատկեն.
Գոհարներով անվախ կուրծքդ զարդարեն,
Կեցցես յաւէտ դու անսասան Անդրանիկ,

Հայաստանի սոխակները քեղ համար,
Թող դայլայլեն գիշեր-ցերեկ անդադար.
Անապլթ մնաս դու քաջ կուփ սիրահար,
Հայրենիքի տէր ու պաշտպան Անդրանիկ:



Ե Ր Գ

Հերիք որգեւակ տոքան տարուան տառապտնք,
Հերիք դաժան անզութ թիւրքին ոտն ինկանք,
Թանի խոնարհ գլուխ դրինք դայլերին,
Այնքան ծանր բեռներ դրին մեր վզին:

Հերիք ենենք ցոյց տանք թէ մենք հաւազատ
Հայ քաջերի արիւնից, ենք եւ ազատ,
Թէեւ չունինք ոչ սուի, ոչ թուր, ոչ նիզակ
Մեր բաներն ալ կանեն նրանց շան սատակ:

Ինչով են նրանք մեղ տիրելու արժանի,
Նրանք մարդ չեն այլ գաղաններ վալրինի,
Մերն է ձիրքը մերն է ուսում ու հօնմար,
Մերն է հոզը, մենք ենք նորա տէրն արզար
Հերիք ելնենք ցոյց տանք եւն.

Նրա՞նց են մեր կոյս աղջիկներ, հարսնունքներ։
Նրա՞նց են մեր ճակտի քրտանց արդիւնքը։
Նրանց սուրբին կարծես ձայրն է մեր հոգին։
Նրանց զամբուլ մեղնէ շատ է թանկագին։
Հերիք, ելնենք ցոյց տանք, եւն։

Մենք եղբայրներ ունինք հեռու տեղերում։
Նոքա մեր վրայ լոիկ արցունք են թափում,
Զեն խնայել թեւ թիկունք կը հակնին,
Շուտով կուգան կը միանան Սուրբ Գործին։



ՍՈՒԿ ՄՈՐՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Իմ սիրելի զաւակունքը
Կը թափառին օտար աշխարհ
Ես ո՞ւր դիմեմ, ո՞ւր փընտըսեմ,
Կը ծառայեն այլոց խոնարհ։

Եկայնք, որդկեակք իմ.
Զեր մօրն ալցելու թեան։

Դարեր անցաւ լուր մը չառի,
Իս քտջերս մեռան կորան,
Կուլա՛մ արիւնըս կը սառի. . . .
Մէկը չունիմ տայ ինձ դարման։

Եկայք որդեակք իմ, եւն։

Արիւնս ցամքած, սիրտը մաշած,
Դէմքս է տիսուր մինչ յաւիտեան։

Ես կարօտոյն իմ որդեկաց,
Պիտի իշնեմ սեւ գերեզման։

Եկայք որդկեակք իմ, եւն։

Եւ գու հովիւ թափառական,
Կ'երգես մըլիուր ի մէջ հովաց.
Ե'կ արտասունք թանկ կորստեան,
Տըխուր մահուան մեր որդեկաց

Եեա՛յք որդեակք իմ, եւն։

Բակ զու կըսունկ իմ հա րենեաց
Գնա հեռու աչքէս ի բաց. . . .
Յետին ողջոյնս տուր զաւակացա.
Զի կհանքս մէջ քոյս է մեսած։

Եկմ՛յք որդեակք իմ եւն։



Ա Զ Ա Տ Ա Ի Թ Ի Ի Ն

Ազան Աստուած այն օրից
Երք համեցաւ չոնչ փչել.
Իմ հողանիւթ շինուածքին,
Կենդանու թիւն պարզեւել.
Ես անբարտո մի մամուկ
Երկու ձերքըս պարզեցի,
Եւ իմ անզօր թեւերով
Սզաստթին զրկեցի,

Մինչ գիշերը անհանգիսաւ.

Թօրոցում կապկապած։
Լալիս էի անդատար,
Մօրը քունը խանգարած,
Խնդրում էի նրանից՝
Բազուկները արձակել
Ես այն օրից ուխտեցի՝
Ազատութիւնը սիրել։

Թոթով լեզախս մինչ կապերն
Սրձակուեցան քակուեցան.
Մինչ ծնողքը իմ ծայնից,
Խնդրոցին ու բերկրացան,
Նախկին խօսքն որ ասացի,
Զէր հայր կամ մայր կամ ալ ինչ,
«Ազատութիւն դուրս թրառ
Իմ մանկական բերանից։

«Ազատութիւն, ինձ կրկնեց,
Ճակատադիրը վերեւից,
Ազատութեան դռ զինւոր
Կամիս զըսւիլ այս օրից,
Ո՞հ փշոտ է ճանապահ,
Քեզ շատ փորձանք կըսպասէ,
Ազատութիւն սիծողին,
Այս աշխարհը խիստ նեղ է»։

—Ազատութիւն. —զոչեցի—

Թող որոտայ իմ զրլիխն
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դաշնէ թըւնամին.
Ես մինչ ՚ի մահ, կախազատ,

Ենթեւ անորդ մահու օրւն,
Պիտի գօսում, պիս կրկնեմ
Անդադոր՝ Ազատութիւն։

(Մ. Նալբանեան)

ԱՌ ԱՆՑՈՐԴՆ

Դրեւ կրտզ կամ վաղախոյս մի առուեր
Կանցնին աւուրք, ամիսք, տարիք եւ զարեր,
Մինչզես բացեր ականողիք քո ի լոյս,
Որպիսի ոք արդեօք տուաւ քեզ սին յոյս

Թէ մահուանէ զերծ դու, անցորդ,
Կենաց միայն ես բաժանորդ։

Ի՞նչ են փառքեր, հաճոյք, վայելք նաև սէր,
Թէ ոչ տիսուր մահուան փայլուն հընչակներ,
Որք մինչ մատչին մեզմեղանօք զըսուիլ ձեզ,
Ցիչ թէ կան անոնց տակ վիշտք ողեկէզ։

Թռ կեանքն է վահ, անցորդ,
Մի խաղալիկ բաղդի ձախորդ։

Ցաւոց հովտիս մինչեւ ջնջին իսկ փոշիք
Կրեն մահուան մի անյեղի գատակնիք,
Զոր զըրդշմեց անվըրէպ մատն Անեղին,
Առ ի խըրատ եւ տիսպար մարդ էակին։

Ցուօս, խարիսխ չիք քեզ անցորդ,
Ցաղգոզգ կենաց քոց տայ յազուրդ։

Ոչ յայո, ոչ կար, ոչ մեծութիւն նոխապանձ

Կարեն փրկել ի մահուանէ ըգբո անձ.
Մինչ վշտասփափ քընարք փըշրին ի հառաջ
Անգութ մահուան անխոս և հարկին ընդ պատշ:
Թւմ ապահան կաս, հեղ տնցորդ,
Ե՞ր այս աշխարհ սիրես յախորս:

Ճշգարիտ եւ անանց կեանք, է ինքն Յիսուս
Որ իւր Խաչիւ կըտակեց մեզ անխար յոյս.
Թէ քո Փըրկւիդ հետեւեցաք օրինակին,
Բարի զործովք զարդորելով քո հսկին.

Յուշ քեզ . . . չս մի անշուք անցորդ,
Ոնման վիճադ գու ժառանգործ:

Տ Մահավեան

Ա Ա Յ Ֆ Ա Դ Ի Ռ Ա Յ Ա Յ Ի Ի Ե

Թէ իմ ալեւոր հերքըս սեւնային
Ոյժըս ինձ յետ զար, կտրիմ զառնայի
Նըժոյդ ձի հիծած, պեխերո ոլորած,
Զիոքո թուր առած ես զաշո կ'երթայի:
Ես դաշտ կերթայի դաշտ Աւարայի:
Ողողուած, ցօղած Հայոց արիւնով.
Ազգ. իմ սիրական, զու տղդ Թորգոմեան,
Քու կորցրած թազը քեզ յետ կուտայի:

Կ'ասէի Հայոց օրիորդներին,
Ծախեցէք հագի ձեր թանգ շորերը.
Թողէք պաճուճանք, գարդ մարդարիտներ,

Ժանգոտած ու փութ են մեր թրերը.
Տաւէք բենեգեայ, մեղ ձեր շապիկը,
Որ մենք փաթաթենք մեր մարմնու վերքը
Վերակապ հրածէք գուլք ձեր մազերից,
Էսպէս յայտնեցէք գուլք մեղ ձեր սէրը:

Թէ ես լինէի հարուստ, մեծատուն,
Սընտուկներս լի ոռկւով, արծաթով,
Շատերու նըման ես չէի լինելու
Երրէք աղջասէր ունայն խօսքերով,
Շամբանեա, զինսւ, փոռք ու պատուի տեղե
Կ'առնէի ասաս զնդակ ու մաօզ,
Արձակ համարձակ կ'երթայի հանգէպ,
Հայատեաց ազգաց անթիւ զօրքերով:

Թէ ես լինէի մի երկրի իշխան,
Կ'ուսայի զօրքիս սաստիկ հրաման,
Շուտագայլ երթալ դէպ ՚ի Հայաստան,
Խըզճուկ հայ աղգին լինել օգնական,
Ելրոպ. Ասիա արեան զետերը
Կը վազցնէի հեղեղի նըման.
Մինչեւ սը թագ. զահ ու ազատ կրօն,
Ինձնից ըստանար թշուառ Հայաստան:

Յայց եթէ մի օր, մի ժամ, մի ըուպէ
Առտուած լինէի մեր հողագրնդին.
Ի՞նչ սուր սրլաքներ պիտի շող տայի
Մեր արիւնարբու թըշնամեաց գընդին,
Նենդ թուրք, քուրդ մոլի, պարսիկ ոխերիմ
Դարաւոր սոսի զու յոյն կրօնամոլ,

Դիտացե որ իմ երկոսոյքի օրէն.
Անձնա չեր զըրծնիւ ոչ մի ձեր արդին:

Քամաս Քարիպս



ՀԱՅԵՐՈՒՄ ԹՈՒՐՔԸ

Դուն խրլօք, հաշուով վաճառական ես,
Միւլք, փող ու սպրանք, կասեն շատ ունետ
Բայց թէ փողէդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ փողիդ ալ վրան:

Քաջ ե՞ս՝ լսել եմ, ինքնըդ մեծաւոր,
Անսուն յաղթողի ունիս փառաւոր,
Բայց թէ թըրէդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ թըրիդ ալ վրան:

Ի վերուստ քանքար քեզի արուած է,
Հեղինակ անունդ աշխարհ փըռուած է,
Բայց թէ թըրչէդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ թըրչիդ ալ վրան:

Հեռատեն մըտքով գուն զարթարեցար,
Հըզօր իշխանի սիրելին դարձար,
Բայց թէ մըտքէդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ մըտքիդ ալ վրան:

Բանուկ ու նաբաար գուն ունիս ձեռքեր,
Շատ կը յօրինես թանկագին բաներ,
Բայց թէ ձեռքէդ շահ չունի Հայաստան,

Թըքել ենք քու ալ ձեռքիդ ալ վրան:

Երկինք չնարհեցին քեզ լեզու ճարտար,
Քարսզի սացար կըոչակ ու հանճար,
Բայց թէ լեզուէդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ լեզուիդ ալ վրան:

Մեծ ուսում ապիր, եղար զիտնական,
Եռվեստըդ լըցուած է մարդոց բերան,
Թէ ուսումնէդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ ուսումնիդ ալ վրան:

Քամաս Քարիպս



ԱՂՋԿԱՑ ԵՐԳԸ

«Մեր Հայրենիք թշուառ անտէր
Մեր թշնամեաց ոոնակոխ
Իւր որդիքը արդ կանչում է
Հտնել իր վրէժ, քէն ու ոխ:

«Մեր Հայրենիք լրդթաներով
Այսքան տարի կապկապած,
Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատված:

«Ահա, եղբայր, քեզ մի զրօշ
Ար իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն լեզաց,
Արտաքու քով լուացի:

«Նայիր նորան, երեք գունով
Նուիրական մեր նշան
Քող փսդիտի թըշնամոյն դէմ,
Թող կործանվի սէզ հըսկան

«Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի
Բայց երարի՛, որ իր Ազգի
Ազատութեան կը դումիի:

(Մ. Նալպահդեան)

20Ն ԱՌ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Հայրիկ հայրիկ քո հայրենիք
Վասպուրական մեր աշխարհ
Վարդի փոխան քեզ փուշ բերաւ,
Ճաւերդ արաւ բիւր հազար:

Գարուն եկաւ սոխակներով
Վարդի թփեր որոնեց,
Խսպառ փըշից մացառ զտաւ,
Լալահառաչ ձոյն հանեց:

Հայրիկն ասաց իմ Հայրենեաց
Փուշն է անուշ քան ըղվարդ
Ես այդ փշոց մէջէն դարձեալ
Կը որոնեմ սիրուն վարդ:

Այն առյօնառուր փշերն ամեն

Փունջ կապեցէք չար ի չար,
Թողէք գըլխիս հիւսեմ պսակ
Որում ճակատս է յօժար:

Որքան ստոր գաւեր լարեն
Սեւակոփնչ ագռաւներ,
Զէ կարելի արծիւն իր բարձր
Թոփցն յերկիր վար բերել:



Ե Ռ Գ

Ահա ելաւ լուսին տրծաթ
Մութ ամպերու ստուերէն,
Ահա նաւակն ալ գեղազարդ
Դուրս սահեցաւ ժայռերէն,
Անուշ հովիկ փչէ յուշիկ
Ու գէպ ինձ բեր բիւրըիւր ալիք:

Նաւակին մէջ իմ զեղուհին
Փոռւած անփոյթ լուսնի տակ,
Կը ձայնակցի իր կիթառին
Հնչուն ձայնով մը յստակ,
Անուշ հովիկ փչէ յուշիկ,
Ու գէպ ինձ բերըիւր անուշիկ:

Զայնով կերպէ ոէր ու վգուանք:
Համակ յուզեմ ու սարսուու,
Ա՛լ թո՛զ աղջիկ երգն ու նուազ
Բաց աչքերը ինձ գարձուր,

Անուշ հայիկ փշէ յուշիկ,
Ու դէղ ինձ բեր ոչըն անուշիկ:

ԳԱՐ ՆԱԽԱՏԵՍՄԸ

Աշխոյժ նաւաստին
Անվեհեր մակատ
Բնդդէմ փռթորկին
Երգէ անփոյթ զուարթ,
Լարիթ թիւմլէրէլէ հա՛, հա՛, հա՛:

Կոհակք փըրիըրադէզ
Չեն սոսկում վախ մեղ,
Հողմունք սաստկահար՝
Դրբուն մեղ ի պար,
Լարիթ թիւմլէրէլէ հա՛, հա՛, հա՛:

Ո՞ն, խըմենք զուարթ,
Գիհին մինչ յատակ.
Օ՞ն, զրկենք զիրար,
Պարենք անդադար:
Լարիթ թիւմլէրէլէ հա՛, հա՛, հա՛:

Լըսեցէք, զիտեցէք,
Մինչեւ մենք հսս եկած ենք,
Սհա ծիրն իւր ուրքերն
Հսս հոն շուտ տանի փոյթ:
Լարիթ թիւմլէրէլէ հա՛, հա՛, հա՛:

Ա՛յ, ա՛յ, ա՛յ, պիտ' իյնայ,

Օ՞ն, բանենք՝ մեղք է մեղք,
Հա՛, հա՛, հա՛, կը իընդայ,
Հսս եկէք, ամենքո ոլ ծափ գարնենք:

Զանգակն ուժգնապիրէ
Կոչէ զմեզ ի կարգ,
Վերջ տանք խնդութեան,
Քաշենք մեր պարան,
Լարիթ թիւմլէրէլէ հա՛, հա՛, հա՛:



b P b

Երբոր ազգին զահը զերցաւ
Երբոր ազգին թագը կորու
Յայնժամ մոլի վտա կղերներ,
Բարձրացուցին իւրեանց զահեր:

Լաւ է կրօնի չչ հաւատալ,
Բան թէ անոր զերի ըլլաւ
Լաւ է որ մարդ չապրի,
Բան թէ ապրի այլոց զերի:

Փամփուշտ, կայծհան, վառոդ, գնդակ
Առաս լեցուր քոյին տոպրակ:
Պատերազմի զաշտին մէջ՝ զուն,
Բնտրէ մեռնիլ քան թէ քո տուն:



ԾԱԽԾԱՆԻԿ

Է՞ր հեռանաս քո մայրենի աշխարհից,
Կարօտ թողուս աերտ բարեկամ քեզանից,
Մեր ամննուս գու մայր. էիր զըթառատ,
Արդ հեռանաս' մեղ մութ պատէ անփարատ:

Քո սուրբ ձեռօք մեր վերքեր չատ անդամ,
Լուանայիր դեղ գլնէիր ամեն ժամ,
Քո մազերից ոլորէիր վիրակապ,
Քո բոլոր կեանք ազգիդ համար էր անկապ.

Ուր որ երթաս, ուր որ լինիո ափրուեիր,
Մեր սիրտն, հոգին քեզ հետ տանիս մաքրունի
Գնաս բարեաւ, մեր յոյս, հաւատ քեզ րնկեր
Այն ու խաչը քեզ պահապան օր զիշեր:

Այդ հայոց զօրքն իրեն մօրից որբանայ,
Վրաց ազգը քու խնամօք պերճանայ.
Հայաստանը զրկւի իր սուրբ շուշանից
Վրաստանը բուրէ հոտով քաղցրալից:

Աղջ ու հաւատդ պիտի պահապանէ մէջ վրաց
Հայ անունըդ միշտ պահէ անմսոաց.
Լոյս հաւատիդ հաստատ կացիր յաւիտեան՝
Լոյս հաւատդ քնզ միշտ պահէ անսասան:

Յ. Կարինեան



ՀԱՅՈՑ ԱՂՋԻԿՆԵՐ

Հայոց աղջիկներ ձեր հոգուն մատադ,
Երբ միտօ էք գալիս ասում եմ միշտ ա՛խ,
Հալվում եմ. հալվ ում օտարութեան մէջ,
Ա՛խ, սիրալս խորդում, ցաւիս չիկայ վերջ:

Երբ կարմիր զինին բաժակրւմ ածած,
Սեղանիս վրայ առաջ է դրած,
Աջքըս ակամայ վրան. եմ ձրգում
Զեր սիրուն պատկերն եմ մէջը տեսնո մ.

Տեսնումեմ եւ, ա՛խ, միտքս է մոլորվում,
Դառն արտասուքով աշքըս պըղտորվում,
Կարծումեմ ըոլոր տշխարհը մըթնեց.
Արեւն էլ խաւրեց. էնտուր որ աըխրեց:

Հայոց աղջիկներ ձեր հոգուն մեռնիմ.
Զեր սիրուն աչքերն էլ ե՞րբ կը տեսնիմ.
Էն սեւ սեւ աչքերն սեւ սւնքով պատած.
Կարծես երկնային զալամով քաշած:

Էն սեւ սեւ աչքերն որ շատին սպանեց,
Բայց էլի շատին զժոխիքից հանեց,
Ես էլ կենդանի տեղովս եմ մեռած
Առանց կրակի էրուած խորովս:

Էլ ե՞րբ կը տեսնիմ ես ձեզ ման զալիս,
Բաղ ու բազայում սէյրան անելիս,
Խօնչ տեղ ամօթից վարդն էլ է զեղնում,
Երբ որ ձեր կարմիր թըշերը մեռնում:

— 66 —

ՔԱՅԼԵՐԴ ՍԱՍՆՈՅ

Սասուն ելաւ ապստամբեց
Աշխարհի մէջ հանեց թունդ,
Ա. Թիրիկա Եւրոպ ցնցեց,
Բաջաց բանակ գունդագունդ:

Հայոց որտեր թրթռացին,
Հայու ձայնը որսաց,
Կարիճը յառաջ շուտ խազոցին,
Ազատութիւնը ինգաց:

Ա. Իւ Սասունցիք, քաջ Սասունցիք,
Զեր արիւնին մենք դուրսպան,
Միութեան օուրը սերմէր ծլին,
Ազատութեան մենք դուրսպան:

Թուրքը լուց եւ կառազեց.
Զօրքեր հանեց բիւրաւոր,
Յիսուն հազար քեւրղեր կտնչեց,
Սրինարբու գորաւոր:

Եւ Սասունը պաշարեցին,
Ս. յն վայրենի գնդերը,
Թնդանօթներ որոստացին,
Բար քանդ ըրին դիւզերը:

Ա. Իւ Սասունցիք քաջ Սասունցիք,
Զեր արիւնին մենք դուրսպան,
Ա. Իւ սուրք հողիդ անման որդիք,
Դիսկներնուգ մենք դուրսպան:

Ծօր արգանդը թուրքը պատռեց
Գլուխն անցուց նիզակին
Մինչ վերջին շունչ Սասուն կռւեց
Ազատութեան կարօտով:

Ա. Իւ թուրք ու քիւրտ բանաւորներ,
Նզովք ըլլայ ձեր դիխուն,
Միշտ կարիչ են Սասունցիներ,
Նզովք Զէրի քո անոն:

Պերձ Մոշլ



ՀԱՅ ԱՊՐԻՆՑ

Հայ ապրինք, եղբարք մարգկութեան մէջը
Հայ կնքեր է մեզ պատմութեան էջը,
Հայ անուամբ զմեզ կոչջունեն երկինք
Եղբարք Հայ ապրինք:

Հայ ապրինք . — մեր հայրն է այն Դիւզապուն
Որ զազատութիւն սորմեցուց մարգուն,
Ու մեզ վեհ անուն մը տուաւ բաժինք
Եղբարք Հայ ապրինք:

Մեր ախարհն է սուրք, մեր հողուն վրան,
Աստուած է քալիք օրհնելով զԱզամ.
Մեր լեզան ատեղծեր ու խօսեր նախ ինք
Եղբարք Հայ ապրինք:

Հայն ու մարգկութիւն նոյն ունին օրբան,

Եղբարք Հայ ապրինք:

— 68 —

Երկիր փրկութեան է մերս Հայաստան,
Կրօնից նախկին սեղան է Մասիք.
Եղբարք Հայ ապրինք:

Հայուն պերճ անուն՝ ոչ միայն յերկիր՝
Այլ ևս եթերց մէջ շողայ լուսալիր.
Քաջ Հայկին աստեղքը անմահ են յերկինք.
Եղբարք Հայ ապրինք:

Հայ ապրինք .— ո՞ր ազդ կայ Հայուն նըման,
Որ ունենայ հին պարձանքներ այսքա՞ն,
Ո՞ր ազդ Հայուն պէս շըքնդ հայրենիք.
Եղբարք Հայ ապրինք:

Բոէ՛ք, ո՞ր ազդին՝ չսրս առաքեալներ
Երկից թագաւորն է գեսպան զբրկեր.
Ո՞ր թագաւորին հետ թըղթակցեր ինք.
Եղբարք Հայ ապրինք:

Ո՞վ կըրնայ համրել սրբոց մեր զանուանք.
Մեր պատրութիւնն նահ տակաց ցանկ.
Մեր հեղեղեցին յերկրի է երկինք.
Եղբարք Հայ ապրինք:

Քրիստոն ունինք անդրանիկ օրհնենք,
Հաւատոց եղանք միշտ ռխոցեան մինք
Հայը զորմացւոց զերկիր եւ զերկինք.
Եղբարք Հայ ապրինք:

Մեր աղջ հետեւող է ճիշտ Յետուսի,
Որ խաչն այսակի դուր տոած է յուսի.
Ո՞չ չսոնարհիր ըլլար դաւալիք.

Այո՛, Խաչին կեանք՝ կեանք է վրշտալից,
Այո՛, Հայուն եետնք՝ կրանք է ցաւալից,
Բայց Խաչն յազթութեան ունի վեհ կնիք.
Եղբարք Հայ ապրինք:

Ո՞չ, ճակատագիր մեր չէ միշտ արխուր՝
Ըզթշուառութեան ուստել հացն ու ջուր
Նոր երջանկութեան ապագա՝ մունինք
Եղբարք Հայ ապրինք:

Հայ ապրինք, որ մեր որդիք ալ եղբարք,
Կարենան պարծիլ որ զենք ունին հարք.
Զըլլանք հայ անուան չըլլանք նախատինք.
Եղբարք Հայ ապրինք:

Խորէն Եպիսկոպոս նար—Պէջ



Օ Ր Գ

Թէ թեւ ունէի ո՞ն կը թըռչէի
Ազատ Մասհաց սարերն ի վեր,
Ես ուժգին ես ուժգին.
Անկէ ձեղ Հայեր կարդայի հրաւէր,
Անկէ ձեղ Հայեր կարդայի հրաւէր,
